

ՍԱԼԽԱՍՏԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Եթէ ընդհանուր մի հայեացք գցենք Սալմաստի կրթական գործի շատ մօտիկ անցեալի վրայ, վերջնելով վերջին տասնամարին, պէտք է տեսնենք, որ այդ տասնամեակում առանձին մղումն չի տրուել կրթութեան, չի ստեղծուել հիմնաւոր և յաբատե գործ: Այն փրկարար կապը, այն զօրաւոր օղակը, որ պիտի կապէր միեւնոյն նպատակին ծառայող հաստատութիւններին, բոլորովին բացակայել է. մի երկու տարիներ միայն, որպէս լուսաւոր կէտեր, փայլում են այդ ընդհանուր խաւար իրականութեան մէջ, տարիներ, որոնք մի-մի օաղիս են անապատի մէջ: Բացատրութիւն կազմում են 1894—95 թւականները, երբ Սալմաստում ընդհանուր տեսուչ էր նշանակուել հանգուցեալ Մկրտիչ Աւետիսեանը: Նա եղել է այն զօրաւոր ձեռքը, որը պիտի դեկավարէր բոլոր դպրոցները, սերտ յարաբերութեան մէջ դնէր նրանց և լուրջ հետեւէր նրանց կանոնաւոր ընթացքին: Նրա օրով եղել են ընդհանուր ուսուցչական ժողովներ, մի ընդհանուր ծրագիր բոլոր դպրոցներում, մի դիսցիպլինա, միատեսակ կարգ ու կանոն: Այժմ ամբողջ Սալմաստում ընդհանրապէս համակրանքով է յիշւում Աւետիսեանի անունը:

Հետանում է Աւետիսեանը, դադարում, մեռնում է և նրա գործը: Կրթութիւնը Սալմաստում նորից մտնում է իր խառնաշփոթ, անկանոն վիճակի մէջ:

Սալմաստի վերջին տասնամեակի դպրոցական գործի պատմութեան մէջ յիշատակելու արժանի տեղ է գրաւում և պ. Ս. Թադէոսեանի անունը: Նա համեստութեան շրջանից դուրս չբալլով շարունակում էր իր գործը և տալիս իրական օգուտ:

Այժմ Սալմաստի հետեւեալ ութ գիւղերը այս 190³/₄ ուսումնական տարում ունեն դպրոցներ:

- | | | |
|-------------|-------------------------|-----------------------|
| 1) Հաֆթլան | 3 ուսուց. և 1 վարժուհի. | 175 աշակ. և աշակ-ուհի |
| 2) Ղալասար | » » » » | 100 » » |
| 3) Փայաջուկ | » » *) | 85 » |

*) Մէկ ուսուցիչը միայն վերջերս եկաւ:

4) Սաւրա	2 ուսուցիչ:		60 աշակ. և աշակ-ուհի
5) Մահլամ	» »		50 »
6) Հին-Քաղաք 1	»		85 »

6 դպրոց 14 ուսուցիչ, 2 վարժուհի 555 » »

Բացի այդ, Ախտախանա, Ղզլա և Սարամերիկ գիւղերում մի քանի օր է, որ դպրոցներ են բացուել. դեռ յայտնի չէ, թէ քանի աշակերտ կը լինի, սակայն իւրաքանչիւր դպրոցի համար նշանակուած է մի ուսուցիչ: Այնպէս որ այժմ, ուսումնական տարուայ չորրորդ ամսուայ սկզբին, Սալմաստում կան 19 ուսուցիչ և ուսուցչուհի, որոնց թւում և այս տողերի գրողը:

Ես առիթ եմ ունեցել արժարժել ուսուցչական ընդհանուր ժողովների հարցը, *) շեշտել դրա կարևորութեան վրայ:

Այս ուսումնական տարին հրաւիրուելով Փայաջուկի համար ուսուցիչ, տեսնելով կրթական հիմնարկութիւնների և ուսուցչաների բաւարար թիւ, հէնց առաջին օրերից սկսեցի մտածել իմ ծրագրի իրագործման մասին, հրաւէր կարդացի ուսուցչական ժողով գումարելու մասին:

Հրաւէրը ընդունուեց ուրախութեամբ բոլորի կողմից, և նշանակուած օրը տեղի ունեցաւ ժողովը: Ներկայ էին ժողովին ինն ուսուցիչ և մէկ վարժուհի, տաս հոգի: Բացակայ էին երեք հոգի, երկուսը հեռաւորութեան պատճառով, իսկ երրորդը սըլալմամբ հրաւէր չէր ստացել:

Ժողովը նախ զբաղուեց ընդհանուր տեսչութեան հարցով, որ պիտի կապէր գաւառի բոլոր դպրոցական հիմնարկութիւնները: Ընդհանուր տեսուչը պէտք է պարբերական ընդհ. ուսուց. ժողովներ կազմակերպէ, հսկի ընդհ. ժողովների որոշումների գործադրութեան վրայ, հոգ տանի ուսուցիչների ուժիկները կանոնաւոր և լրիւ սաանալու համար, ընդհանուր ուսուցչական ժողովներում նախագահի կային:

Այդ հետաքրքրական ժողովները տեղական կեանքի համար ահագին նշանակութիւն պէտք է ունենան:

Սալմաստի ընդհանուր ուսուցչական անդրանիկ այդ ժողովը, որը տեւեց ամբողջ երեք ժամ, անցաւ շատ հետաքրքիր: Ուսուցիչները որոշեցին երկրորդ նիստը գումարել Հաֆթվանում գեկտեմբերի 9-ին, իսկ երրորդը՝ յունուարի 7-ին նոյն տեղը:

Ե. ՖՐԱՆԿԵԱՆ

*) Տես »Կրթական դրօշ» Արարատականում, «Մուրճ», 1902, № 4.